

**ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը**

**ՔԱՂԱՔԱՑԻ ԿԱՐԵՆ ՄԵԺԼՈՒՄՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՆԻՄԱՆ ՎՐԱ ՎԱՐՉԱԿԱՆ
ԻՐԱՎԱԽԱՆՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆՏ ՕՐԵՆՍԳՐՔԻ 305-ՐԴ ՆՈՂՎԱԾԻ
3-ՐԴ ԵՎ 4-ՐԴ ՄԱՍԵՐԻ՝ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹ-
ՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

13 նոյեմբերի 2012թ.

Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.
Վ. Նովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի,
Ա. Խաչատրյանի, Ն. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ՝

դիմող Կ. Մեժլումյանի,

գործով որպես պարասխանող կողմ ներգրավված՝ ՆՏ Ազգային ժողովի պաշ-
տոնական ներկայացուցիչներ՝ ՆՏ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանա-
կան վարչության իրավական փորձաքննության բաժնի գլխավոր մասնագետ
Ս. Նամբարձումյանի եւ նույն բաժնի առաջապար մասնագետ Ն. Սարգսյանի,

համաձայն Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդ-
վածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատա-
րանի մասին» ՆՏ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Կարեն Մեժ-
լումյանի դիմումի հիման վրա՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՆՏ
օրենսգրքի 305-րդ հոդվածի 3-րդ եւ 4-րդ մասերի՝ Նայասարանի Նանրապետության
Սահմանադրությանը համապարասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Կ. Մեժլումյանի՝ 01.08.2012թ. ՆՏ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՆՏ օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՆՏ օրենսգիրքը ՆխՄՏ Գերագույն խորհրդի կողմից ընդունվել է 1985 թվականի դեկտեմբերի 6-ին եւ ուժի մեջ է մտել 1986 թվականի հունիսի 1-ից:

Օրենսգրքի՝ «Տուգանք նշանակելու մասին որոշումը կատարելու ժամկետներն ու կարգը» վերաբառությամբ 305-րդ հոդվածը սահմանում է.

«Խախտողի կողմից տուգանքը պետք է վճարվի տուգանք նշանակելու մասին որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում, իսկ այդ որոշումը գանգառարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգառը կամ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում:

Եթե սույն օրենսգրքի 224-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հոդվածներով սահմանված տուգանքը նշանակելու մասին որոշումը իրավախախտում կատարած անձին հանձնելու օրվանից հետո՝ տասնօրյա ժամկետում, անձը դիմում է ոստիկանություն տուգանքի վճարումը տարաժամկետելու խնդրանքով, ապա վճարումը համարվում է տարաժամկետված դիմումի մեջ նշված ժամկետով, բայց ոչ ավելի, քան 6 ամիս:

Սույն օրենսգրքի 224-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հոդվածներով սահմանված տուգանքը նշանակելու մասին որոշումը իրավախախտում կատարած անձին հանձնելու օրվանից, իսկ տուգանքը տարաժամկետելու դիմումում սահմանված ժամկետում կամ տուգանքը նշանակելու վերաբերյալ որոշումը բողոքարկելու դեպքում բողոքն առանց բավարարման թողնելուց հետո՝ 30 օրվա ընթացքում, տուգանքը չվճարելու դեպքում տուգանքի չափը եռապատկվում է:

Սույն օրենսգրքի 224-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հոդվածներով սահմանված տուգանքը նշանակելու մասին որոշումը իրավախախտում կատարած անձին հանձնելու օրվանից, իսկ տուգանքը տարաժամկետելու դիմումում սահմանված ժամկետում կամ տուգանքը նշանակելու վերաբերյալ որոշումը գանգա-

տարկելու կամ բողոքարկելու դեպքում բողոքն առանց բավարարման թողնելուց հետո՝ 60 օրվա ընթացքում, փուզանքը չվճարելու դեպքում փուզանքի չափը հնգապատկվում է, որը ենթակա է դատական կարգով բռնագանձման: Տուգանքի գումարի բռնագանձման համար վարույթ իրականացնող մարմինը պարտավոր է 60-օրյա ժամկետը լրանալուց հետո՝ 120 օրվա ընթացքում, դիմել դատարան:

Եթե մանր խուլիզանություն կատարած փասնվեցից մինչև փասնութ տարեկան անձինք ինքնուրույն վաստակ չունեն, փուզանքը գանձվում է ծնողներից կամ նրանց փոխարինող անձանցից:

Վարչական իրավախախտում կատարելու համար նշանակված փուզանքը խախտողի կողմից մուծվում է կենտրոնական գանձապետարանի համապատասխան հաշվին:

Ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար նշանակված փուզանքը խախտողը մուծում է կենտրոնական գանձապետարան, բացառությամբ իրավախախտման կատարման տեղում գանձվող փուզանքի:

Սույն օրենսգրքի 43.1-րդ, 48-րդ, 54-րդ, 56-58-րդ, 158 (բացառությամբ երկրորդ, երրորդ, փասնելուերորդ, փասնիններորդ եւ քսանմեկերորդ մասերի), 162, 169.16 հոդվածներով նախատեսված դեպքերում համայնքների վարչական սահմաններում թույլ տված իրավախախտումների համար նշանակված փուզանքը մուտքագրվում է համայնքային բյուջե, համայնքի վարչական սահմանից դուրս՝ Երևան քաղաքում, ինչպես նաև տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց թույլ տված իրավախախտումների համար նշանակված փուզանքը մուտքագրվում է պետական բյուջե»:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՆՏ օրենսգրքի 305-րդ հոդվածում կատարվել են մի շարք փոփոխություններ՝ 10.03.90, 11.12.02 ՆՕ-495-Ն, 16.12.05 ՆՕ-26-Ն, 21.02.07 ՆՕ-73-Ն, 27.02.07 ՆՕ-134-Ն, 06.12.07 ՆՕ-296-Ն, 02.12.08 ՆՕ-221-Ն, 18.05.10 ՆՕ-65-Ն, 07.02.12 ՆՕ-2-Ն օրենքներ:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին. դիմողը ՆՏ ճանապարհային ոստիկանության կողմից նշանակված փուզանքը սահմանված ժամկետում չի վճարել, ինչի արդյունքում դրա չափը սկզբում՝ եռապատկվել, այնուհետև հնգապատկվել է, եւ ՆՏ ճանապարհային ոստիկանությունն օրենքով սահմանված կարգով հայց է ներկայացրել ՆՏ վարչական դատարան՝ արդեն իսկ հնգապատկված փուզանքը բռնագանձելու պահանջով:

Դիմողը, իր հերթին, ներկայացրել է հակընդդեմ հայց՝ վիճարկելով ՆՏ ճանապարհային ոստիկանության գործողությունները (անգործությունը) այն առումով, որ վերջինս փուզանքի չափը եռապատկելիս եւ հնգապատկելիս վարչական վարույթ չի հարուցել, հեպեուաբար՝ իրեն մասնակից չեն դարձրել եւ չեն պարզել փուզանքը սահմանված ժամկետում չմուծելու մեջ իր մեղավորության աստիճանը:

ՆՏ վարչական դատարանն իր՝ 15.04.2011թ. թիվ ՎԴ4/0230/05/10 վճռով բավարարել է ՆՏ ճանապարհային ոստիկանության հայցը, իսկ հակընդդեմ հայցը՝ մերժել այն պարճառաբանությամբ, որ «... փուզանքի գումարը չվճարելու դեպքում այդ գումարը օրենքի ուժով է եռապատկվում կամ հնգապատկվում, որի համար վարչական վարույթ հարուցելու եւ փուզանքի գումարը համապատասխան չափով ավելացնելու օրենսդրական պահանջ չկա»:

Դիմողի բերած վերաքննիչ բողոքը ՆՏ վարչական վերաքննիչ դատարանն իր՝ 03.11.2011թ. թիվ ՎԴ4/0230/05/10 որոշմամբ մերժել է այն պարճառաբանությամբ, որ «... Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 305-րդ հոդվածով սահմանված վարչական փուզանքի սկզբնական չափի բազմապատկումը չպետք է առանձին վարչական վարույթի եւ դրա արդյունքում ընդունվելիք վարչական ակտի առարկա դառնա: Ընդհակառակը, նշված բազմապատկումը սահմանված է որպես հեպեուանք՝ պայմանավորված նշանակված վարչական փուզանքը չվճարելու որոշակի ժամանակամիջոցի լրանալով, առանց որեւէ այլ պայմանի կամ վերապահման: ... օրենսդիրը նշված բազմապատկումը սահմանել է որպես նշված ժամանակամիջոցի լրանալու արդյունքում ինքնաբերաբար (ավտոմատիկ) կերպով տեղի ունեցող իրադարձություն: ... Այսինքն՝ փուզանքի չափի բազմապատկման փաստը վարչական վարույթի առարկա չի կարող դառնալ, քանի որ բազմապատկումը տեղի է ունենում օրենքի ուժով եւ այդ կապակցությամբ վարչական ակտ ընդունելու անհրաժեշտությունը բացակայում է: ... Փաստորեն, ... փուզանքի չափի բազմապատկումը օրենքի ուժով տեղի ունեցող իրադարձություն է՝ անկախ վարչական մարմնի հայեցողությունից, իսկ վերջինս միայն լիազորված է ապահովելու վարչական ակտի կատարումը՝ օրենքով սահմանված չափով փուզանքը զանձելու առումով: Այսինքն՝ Նայաստանի Նանրապետության ոստիկանության ճանապարհային ոստիկանությունը չի բազմապատկել փուզանքի գումարը, այլ դա տեղի է ունեցել որպես օրենքով սահմանված ժամկետում դրա սկզբնական չափը չվճարելու հեպեուանք»:

ՆՏ վճռաբեկ դատարանը, վերահաստատելով ՆՏ վարչական վերաքննիչ դատարանի՝ վերը նշված իրավական դիրքորոշումները, իր՝ 25.01.2012թ. թիվ ՎԴ4/0230/05/10 որոշմամբ վերադարձրել է դիմողի վճռաբեկ բողոքը:

3. Դիմողը ՆՏ սահմանադրական դատարանում վիճարկում է խնդրո առարկա դրույթները՝ իրավակիրառական պրակտիկայում դրանց տրված մեկնաբանության փաստանկյունից, եւ գտնում է, որ նման մեկնաբանությունը խախտում է իր՝ ՆՏ Սահմանադրությամբ եւ միջազգային ակտերով երաշխավորված՝ պետական մարմինների ու դատարանի առջեւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը, քանի որ անձը գույքային պարասխանավորության ձեռով փուզանքի է ենթարկվում «ինքնաբերաբար (ավտոմատիկ) կերպով» տեղի ունեցող իրադարձության արդյունքում, առանց պարզելու նրա մեղքի առկայությունը կամ բացակայությունը կամ վճարումն անհաղթահարելի դարձնող այլ հանգամանքները, օրինակ՝ անձի գորակոչված լինելը, անձի անկողնային հիվանդ կամ անգործունակ դառնալը:

Ըստ դիմողի՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՆՏ օրենսգրքի վիճարկվող դրույթները՝ իրավակիրառական պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությամբ, հակասում են ՆՏ Սահմանադրության 3, 18 եւ 19-րդ հոդվածների պահանջներին:

4. Պարասխանող կողմը, առարկելով դիմողի փաստարկներին, գտնում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՆՏ օրենսգրքի 305-րդ հոդվածի 3-րդ եւ 4-րդ մասերը համապարասխանում են ՆՏ Սահմանադրության 3, 18 եւ 19-րդ հոդվածների պահանջներին:

Անդրադառնալով դիմողի փաստարկներին, համաձայն որոնց՝ փուզանքի չափը եռապարկվելու եւ հնգապարկվելու մասին օրենսգրքի վիճարկվող դրույթները պետք է կիրառվեն ոչ թե ինքնաբերաբար, այլ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պետք է վարչական վարույթի շրջանակներում ընդունվի վարչական ակտ, եւ փուզանքի գումարը բազմապարկվելիս պետք է հաշվի առնվեն փուզանքը սահմանված ժամկետում չվճարելու մեջ անձի մեղավորությունը կամ վճարումն անհաղթահարելի դարձնող հանգամանքները, պարասխանող կողմը գտնում է, որ դիմողի բարձրացրած հիմնախնդրի լուծումն առկա է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՆՏ օրենսգրքի 300-րդ հոդվածում եւ 305-րդ հոդվածի 2-րդ մասում, որոնցով նախատեսված է համապարասխանաբար՝ փուզանք նշանակելու մասին որոշման կատարման հետաձգման եւ նշանակված փուզանքի վճարումը փարաժամկետելու ինստիտուտներ: Պարասխանողի

կարծիքով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՏՏ օրենսգրքի վերը նշված դրույթները բավարար են փուզանքի չվճարման անբարենպաստ հետեւանքներից խուսափելու համար:

Նշանակված փուզանքի գումարի վճարումն անհաղթահարելի դարձնող հնարավոր հանգամանքների առնչությամբ պարասխանողը, հղում կատարելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՏՏ օրենսգրքի 19, 247 եւ 301-րդ հոդվածներին, ՏՏ քաղաքացիական օրենսգրքի 31-րդ հոդվածին, գտնում է, որ անձի անմեղսունակության եւ մահվան դեպքերում օրենսդիրը բացառում է վարչական վարույթի հարուցումը կամ հարուցված վարույթի շարունակումը: Պարասխանողն արձանագրում է նաեւ, որ օրենքով սահմանված ժամկետում չվճարված վարչական փուզանքի բազմապատկումը փեղի է ունենում մեկ վարչական վարույթի շրջանակներում:

Անդրադառնալով այն հնարավոր դեպքերին, երբ վարչական փույժ նշանակելու մասին որոշումն իրավախախտում կատարած անձին հանձնելու պահին անձը չի գտնվում իր կողմից նշված հաշվառման (գտնվելու) կամ բնակության վայրում, կամ մինչեւ որոշման հանձնումը փոխում է մշտական բնակության վայրը, պարասխանողն արձանագրում է, որ օրենսգրքի 283-րդ հոդվածի 6-րդ մասի ուժով նման դեպքերում որոշումները համարվում են հանձնված:

5. Նաշվի առնելով դիմողի փաստարկները՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում սույն գործի քննության շրջանակներում բացահայտել հետեւյալ հանգամանքները.

ա/ արդյոք նշանակված փուզանքն օրենքով սահմանված ժամկետում չվճարելը փվյալ դեպքում հանդիսանում է ինքնուրույն վարչական իրավախախտում,

բ/ արդյոք նշանակված փուզանքի եռապատկումը կամ հնգապատկումը գործող օրենսդրության շրջանակներում դիտվում է որպես նոր պարժապետակ:

Միաժամանակ, սահմանադրական դատարանը հարկ է համարում նաեւ սույն գործի քննության շրջանակներում բացահայտել օրենսգրքի՝ խնդրո առարկա հոդվածով սահմանված իրավակարգավորման իրավազափոխումներ:

6. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՏՏ օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում, մասնավորապես, պետական կամ հասարակական կարգի, քաղաքացիների իրավունքների եւ ազատությունների դեմ ուրնձգվող հակաիրավական, մեղավոր

(դիտարկողյալ կամ անգգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՆՏ օրենսգրքի ուսումնասիրությունից բխում է, որ օրենսգիրքը չի նախատեսում այնպիսի իրավախախտում, ինչպիսին նշանակված փուլում օրենքով սահմանված ժամկետներում չվճարելն է: Նիմք ընդունելով նշված հանգամանքը՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նշանակված փուլում օրենքով սահմանված ժամկետներում չվճարելը չի հանդիսանում վարչական իրավախախտում, հետեւաբար, օրենսգրքի վիճարկվող դրույթներով սահմանված՝ փուլում չափի եռապարկման եւ հնգապարկման դեպքում բացառվում է վարչական վարույթի հարուցումը՝ դրանից բխող բոլոր հետեւանքներով: Տուգանքի չափի եռապարկումը եւ հնգապարկումը չի հանդիսանում վարչական փուլի փակ եւ վարչական պատասխանատվության միջոց, այլ կոչված է կանխարգելելու օրենքով սահմանված կարգով նշանակված վարչական փուլերը սահմանված ժամկետում չվճարելու հնարավոր դեպքերը եւ ուղղված է կանխելու նոր իրավախախտումների կատարումը, բարձրացնելու իրավախախտում կատարած անձանց կարգապահությունը՝ պետության առջեւ ունեցած պարտավորությունների բարեխիղճ կատարման գործում:

Սահմանադրական դատարանը սույն գործի քննության շրջանակներում հարկ է համարում նաեւ վկայակոչել իր՝ 20.12.2011թ. ՄԴՈ-1007 որոշման 6-րդ կետի 10-րդ պարբերության մեջ արտահայտված հետեւյալ իրավական դիրքորոշումը. «Սահմանադրական դատարանը հիմնավոր չի համարում նաեւ դիմողի դիրքորոշումը՝ կապված օրենքի վիճարկվող դրույթի իրավական անորոշության հետ, քանի որ, նախ՝ օրենքը հստակ սահմանել է փուլում գումարը երեսնօրյա ժամկետում չմուծելու դեպքում նշված գումարի կրկնապարկման կարգը, երկրորդ՝ նշված կարգը սահմանված է օրենքով, որպես համապատասխան վիճակը վրա հասնելու դեպքում ինքնաբերաբար, իրավունքի ուժով գործող կանոն եւ դրա համար լրացուցիչ չի պահանջվում համապատասխան վարչական ակտի ընդունում»:

Վերահաստատելով ՄԴՈ-1007 որոշման մեջ արտահայտված՝ վերը նշված իրավական դիրքորոշումները, սահմանադրական դատարանը գտնում է, որ դրանք կիրառելի են նաեւ սույն գործով:

Նիմք ընդունելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանը հիմնավոր չի համարում դիմողի այն պնդումները, համաձայն որոնց՝ փուլում չափի եռապարկման եւ հնգապարկման յուրաքանչյուր դեպքը պետք է դիտել որպես նոր պարտավորություն, եւ

յուրաքանչյուր դեպքում պետք է վարչական վարույթի շրջանակներում ընդունվի վարչական ակտ՝ որոշում: Այլ խնդիր է, թե որքանով են երաշխավորված անձի իրավունքներն այն հնարավոր իրավիճակներում, երբ առկա է նշանակված փուլանքն օրենքով սահմանված ժամկետներում վճարելու օբյեկտիվ անհնարինություն: Տվյալ դեպքում բարձրացված հիմնախնդիրը կարող է աղերսներ ունենալ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի, ինչպես նաեւ ՏՏ Սահմանադրության 3-րդ հոդվածի, Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածներով նախատեսված՝ դատական պաշտպանության արդյունավետ միջոցների եւ արդար դատաբանության իրավունքների հետ:

Սահմանադրական դատարանը չի բացառում այնպիսի իրավիճակները, երբ անձը, որի նկատմամբ նշանակված է վարչական փուլ՝ փուլանք, փարբեր օբյեկտիվ պարճառներով, ներառյալ՝ անհաղթահարելի ուժի առկայությունը, չկարողանա օրենքով սահմանված ժամկետներում վճարել փուլանքը: Այս դեպքում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՏՏ օրենսգրքի վիճարկվող նորմերի ուժով, այսինքն՝ իրավունքի ուժով, նշանակված փուլանքի չափն ինքնաբերաբար բազմապատկվում է, որպիսի պայմաններում անձին չի տրվում հնարավորություն ապացուցելու իր պարտավորությունների չկատարման պարճառների՝ իր կամքից անկախ լինելը:

Մասնավորապես, ըստ ՏՏ վարչական դատավարության օրենսգրքի՝ բոլոր այն դեպքերում, երբ վճարման կարգադրություն արձակելու հայցադիմումը մերժվում է, լսվելու հնարավորություն է տրվում վարչական դատարան դիմողին (ՏՏ վարչական դատավարության օրենսգրքի 156-րդ հոդված): Ինչ վերաբերում է րվյալ վարչական գործով պարասխանողին, ապա նշված վարույթի շրջանակներում պարասխանողը հնարավորություն ունի ներկայացնելու հակընդդեմ հայց միայն վարչական ակտը, րվյալ դեպքում՝ փուլանք նշանակելու մասին որոշումը (այլ ոչ թե փուլանքի չափի եռապատկումը կամ հնգապատկումը) վերացնելու կամ փոփոխելու վերաբերյալ, եթե պարասխանողը վարչական ակտը համարում է ապօրինի: Որեւէ այլ պարագայում եւ որեւէ այլ կերպ պարասխանողը վճարման կարգադրություն արձակելու մասին հայցադիմումի քննության վարույթի շրջանակներում փուլանքը ժամանակին չվճարելու օբյեկտիվ պարճառների մասին նույնիսկ հակընդդեմ հայցի միջոցով հիմնավորումներ ներկայացնելու եւ այդ հարցով լսվելու իրավական հնարավորություն չունի:

Ելնելով սրանձնված միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատարման, ՏՏ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածներով նախատեսված՝ դատական

պաշտպանության արդյունավետ միջոցների եւ արդար դատաքննության իրավունքների երաշխավորման անհրաժեշտությունից, սահմանադրական դատարանն իրավական պետությանն անհարիր է համարում վերը նշված իրավիճակը եւ գտնում, որ դրա պատճառն իրավական բացն է: Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատարաններում օրենսգրքի վիճարկվող նորմերով նախատեսված փուզանքի հնգապարիկի չափը բռնազանձելու մասին հայցի քննության ժամանակ անձը պետք է հնարավորություն ունենա ներկայացնելու, իսկ դատարանն էլ պետք է քննարկման առարկա դարձնի եւ գնահատի նրա ներկայացրած հիմնավորումներն այն մասին, թե արդյոք առկա են եղել արտակարգ եւ անհատաշահարելի հանգամանքներ, որոնք խոչընդոտել են անձին ժամանակին կատարելու իր պարտավորությունները պետության առջև, կամ արդյոք անձը ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները պարտավորությունը կատարելու համար եւ այդպիսի հանգամանքների առկայությունը հաստատելու պարագայում հարգելի համարի բաց թողնված ժամկետները: **Ընդ որում, նման իրավակարգավորում նախատեսված է ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ:**

7. Սահմանադրական դատարանը հարկ է համարում խնդրո առարկա իրավակարգավորումը դիտարկել նաեւ ՆՏ Սահմանադրության 31-րդ հոդվածի երկրորդ պարբերության համարեքստում, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ անձի դրամական միջոցները հանդիսանում են անձի սեփականությունը: Այս կապակցությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Սահմանադրության 31-րդ հոդվածի երկրորդ պարբերությամբ ամրագրված՝ անձին սեփականությունից **բացառապես դատական կարգով** գրկելու վերաբերյալ դրույթի իրացումը ենթադրում է համապարասխան դատավարական երաշխիքների առկայություն, որը հավասարապես պարաձվում է նաեւ օրենսգրքի վիճարկվող նորմերի կիրառման նկատմամբ: Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսգրքի վիճարկվող նորմերի ուժով փուզանքի հնգապարիկի չափը դատական կարգով բռնազանձելը չպետք է լինի ՆՏ Սահմանադրության 31-րդ հոդվածի երկրորդ պարբերության **ձեւական իրականացման գործիք:** Սեփականությունից գրկելու հետ կապված հարցը դատական կարգով քննելու սահմանադրական պահանջը նպատակ ունի ապահովելու գործի հանգամանքների համակողմանի քննությունը, երաշխավորելու կողմերի՝ դատարանի կողմից լսվելու իրավունքը, փյլյալ պարագայում՝ փուզանքը ժամանակին չվճարելու մեջ անձի մեղավորության բացակայությունը կամ առկայությունը հիմնավորող ապացույցների ուսումնասիրությունն ու գնահատումը:

Միաժամանակ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՆՏ օրենսգրքի խնդիրը չէ սահմանելու համապարասխան ընթացակարգեր, քանի որ օրենսգիրքը կոչված է պահպանելու նյութաիրավական հարաբերությունները՝ քաղաքացիների իրավունքներ, բնակչության առողջություն, սեփականություն եւ այլն, իսկ վարչական իրավունքի շրջանակներում առաջացող հարաբերությունները կարգավորող, տվյալ դեպքում՝ պահպանող նյութաիրավական նորմերի իրացման ընթացակարգերը սահմանվում են ընթացակարգային օրենքներով, այն է՝ «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՆՏ օրենքով եւ ՆՏ վարչական դատավարության օրենսգրքով:

Վերոշարադրյալի հիման վրա սահմանադրական դատարանը գտնում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՆՏ օրենսգրքի վիճարկվող դրույթները սահմանադրականության խնդիր չեն առաջացնում, իսկ դիմողի կողմից բարձրացված հիմնախնդիրը՝ կապված նշանակված տուգանքը պարտավոր անձից անկախ պարճառներով օրենքով սահմանված ժամկետներում չվճարելու հետ, պայմանավորված է ոչ թե Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՆՏ օրենսգրքի վիճարկվող դրույթների սահմանադրականությամբ, **այլ՝ ՆՏ վարչական դատավարության օրենսգրքում համապարասխան իրավակարգավորման բացակայության հետ, որի քննությունը դուրս է ՆՏ սահմանադրական դատարանի լիազորությունների շրջանակից:**

8. Սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ նաեւ պարասխանող կողմի բացատրություններում տեղ գրած առանձին փաստարկների, քանի որ պարասխանող կողմը, **չբացառելով նշանակված տուգանքն օրենքով սահմանված ժամկետներում չվճարելու դեպքում անձի մեղավորության բացահայտման, ներառյալ՝ նշված տուգանքը չվճարելու պարճառները հաշվի առնելու անհրաժեշտությունը**, գտնում է, որ, ինչպես արդեն արձանագրվել է, դիմողի բարձրացրած հիմնախնդրի լուծումն առկա է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՆՏ օրենսգրքի 305-րդ հոդվածի 2-րդ մասում, որով նախատեսված է նշանակված տուգանքի վճարումը փարաժամկետելու ինստիտուտ: **Պարասխանողի** կարծիքով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՆՏ օրենսգրքի 305-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված դրույթները բավարար են տուգանքի չվճարման անբարենպաստ հետեւանքներից խուսափելու համար:

Պարասխանողի՝ վերը նշված բացատրությունների առնչությամբ սահմանադրական դատարանը գտնում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՆՏ

օրենսգրքի 305-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավակարգավորումն ամբողջությամբ չի կարող լուծել դիմողի կողմից բարձրացված՝ վերը նշված հիմնախնդիրը, քանի որ, **նախ**՝ նշանակված փուլանքի վճարումը փարաժամկետելու վերաբերյալ դիմում ներկայացնելու համար սահմանված է 10-օրյա ժամկետ, մինչդեռ հնարավոր են իրավիճակներ, երբ փուլանքի վճարումն անհնարին դարձնող պատճառները վրա հասնեն մինչև վճարման համար նախատեսված 30-օրյա ժամկետի ավարտը՝ ցանկացած այլ պահի: Ավելին, նման օբյեկտիվ պատճառներ կարող են ի հայտ գալ փուլանքի եռապարկումից հետո՝ մինչև հնգապարկումը: **Երկրորդ**՝ դիտարկվող իրավակարգավորումն օրենսդիրը փուլանքի վճարումը փարաժամկետելու վերաբերյալ որոշում կայացնելիս հայեցողական իրավասություն է վերապահել վարչական մարմնին, փվյալ դեպքում՝ ՏՏ ճանապարհային ոստիկանությանն այն դեպքում, երբ օրենսդրությամբ նախատեսված չէ հիմքերի այն նվազագույն շրջանակը, որոնց պարագայում ՏՏ ճանապարհային ոստիկանությունը պետք է կամ կարող է փարաժամկետել փուլանքի վճարումը: Այս հիմնախնդրի լուծումը վերապահված է օրենսդիր մարմնին:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՏՏ օրենսգրքի 305-րդ հոդվածի 3-րդ եւ 4-րդ մասերի դրույթները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Վ. ՀՈՎՀԱՄԵՆՆԻՍՅԱՆ

13 նոյեմբերի 2012 թվականի
ՍԴՈ- 1056